ւորումների վնասները, եթէ կալանաւորը դատարանով անմեղ արձակուի:

«Այսպէս, քո բոլոր քայլերը հայոց օրէնքին համեմատ լինելու պայմանով՝ մենք պատուեցինք քեզ, մեր տէրը, մեր նախարարը, մեր առաջին պաշտօնեան եւ մեր հաւատարիմ ըսպասաւորը: Քեզ հետ միասին մենք եւս լինելու ենք հայոց սպասաւորը, որպէսզի դու մընաս եւ իշխես ըստ օրէնքի քո եւ մեր ամէնքի գործերին, ինչպէս նաեւ Հայաստան աշխարհի բոլոր ազգաբնակութեանն ու հիմնարկութիւններին, բացի հայոց բարձրագահ եւ բարեվարք տնից, որովհետեւ մարդկային ոչ մի ծնունդ իրաւունք չունի իշխելու հայոց տան վրայ» (ծա):

Ինչպէս տեսնում էք, Հայաստանի Հանրապետութեան նախագահը համարեա նոյն իրաւունքներն ու պարտականութիւններն ունի, ինչ որ ունին ներկայում Ֆրանսայի կամ Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահները: Սակայն, օրէնքի հեղինակութիւնը Շահամիրեանի մօտ արդէն մի տեսակ պաշտամունքի է հասնում,— մի բան, որ արդիւնք է մի կողմից՝ իր դարաշրջանի ընդհանուր մըտայնութեան, իսկ միւս կողմից՝ մասնաւորապէս անգլիական ոգու զօրեղ ազդեցութեան:

Տեսնում էք նաեւ, որ Հայաստանի Հանրապետութեան նախագահի պաշտօնը ժառանգական չէ — ըստ Շահամիրեանի — այսպէս կոչուած, հիմնական օրէնքների: Նա ընտրւում է միմիայն 3 տարով եւ անչուշտ կարող է վերընտրուել: Թէեւ այս մասին որեւէ յատուկ օրէնք չկայ «Որ. Փառաց»ի մէջ, սակայն այն օրէնքից, որ պատգամաւորները վերընտրելի են (ժդ), կարելի է այդպիսի եզրակացութիւն հանել:

Դեռ աւելի. նախագահի պաշտօնը ոչ միայն ժառանգական չէ, այլ եւ երկարատեւ չէ, ինչպէս օրինակ, Ֆրանսայի նախագահի պաշտօնը, որ ընտրւում է 7 տարով: Պէտք է ընդդրծել, որ մեր հեղինակը ընդհանրապէս դէմ է որեւէ երկարատեւ պաշտօնի, եւ նրա առաջադրած բոլոր օրէնքները — բացի 12-ի խորհրդից — տոգորուած են այդ ոգով: Նա վախենում է մի պաշտօն երկար ժամանակով մէկին թողնելուց, որովհետեւ մարդու փոփոխական բնութեան ուսմունքի ջերմ հաւատացող լինելով, իրաւացիօրէն մտածում է, թէ մի մարդու երկարատեւ իշխանութիւնը, պատասխանատուութեան գիտակցութիւնից համարեա ազատ լինելով, կարող է չարիքների աղբիւր հանդիսանալ երկրի եւ ժողովրդի համար:

Բայց չնայած դրան, Հանրապ. նախագահի այդ չափազանց կարեւոր պաշտօնի նկատմամբ՝ մեր Շահամիրեանը անսպասելիօրէն հակասութեան մէջ է ընկնում ինքն իր հետ: Մի առանձին յօդուածով նա թոյլատրում է, որ Հայաստանի Հանր. նախագահի պաշտօնը ոչ միայն երկարատեւ, ցմահ, այլ եւ ժառանգական կարող է լինել, որդուց-որդի կամ սերընդից-սերունդ, եթէ հայոց արքայական հարըստութիւններից — Հայկազանց, Արշակունեաց կամ Բագրատունեաց — մէկն ու մէկի օրինական ժառանգը յանկարծ յայտնուի եւ խոստանայ հնազանդել այն բոլոր օրէնքներին ու կարգերին, որոնց հնազանդում է ընտրովի նախագահը (ծբ, ծգ):

Իր այս անհետեւողականութեան մէջ աւելի առաջ գնալով, մի յատուկ օրէնքով էլ ջնջում է 12-ի այն յոյժ կարեւոր խորհուրդը եւ վերածում մի սովորական յանձնաժողովի, 3 տարի ժամանակով, եթէ Հանրապետութեան նախագահութիւնը լինի ժառանգական կամ ինչպէս ինքն է ասում՝ «ժառանգաւոր» (ծդ):

Սակայն, դրանով էլ չբաւականանալով եւ մի անգամ արդէն թեք մակարդակի վրայ կանգնելով, նա շարունակում է իր սայթաքումները: Հակառակ իր առաջադրած օրէնքների ոգուն, մանաւանդ այնպէս ջերմաջինա պաշտպանած մարդկային հաւասարութեան դաղափարին, նա մի բացառիկ արտօնեալ վիճակ է ստեղծում ոչ միայն իրեն, Հանր. նախագահի, այլ եւ նրա ամբողջ ընտանիքի համար:

Այսպէս, նախագահի անդրանիկ տղան հօր տեղակալն է կամ «երկրորդ նախագահը». միւս որդիները ծառայում են զօրքի մէջ երկրորդ սպարապետութեան, երկրորդ ասպետութեան եւ երկրորդ «հրացանապետութեան» պաշտօններում, բայց մի սահմանափակումով — երբեք առաջին սպարապետութեան, առաջին ասպետութեան եւ առաջին «հրացանապետութեան» պաշտօններում (ծզ):